ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի մարտի 6-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12»

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019թ. մարտի 4-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019թ. մարտի 6-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1. Չափաբաժին 2
Տես կից ֆայլը

Պարզաբանում N 1.
Տես կից ֆայլը

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աշոտ Գրիգորյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլեկտրանային փոստ՝ «a.grigoryan@mil.am»:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Հարգելի գործընկեր,

Հայտնում ենք, որ թե EMP.3001 մոդելի հաց կտրող մեքենայի արտադրող ընկերությունից ստացված տեղեկատվության (գծագիրը կցվում է), և թե մեր ընկերության կողմից նախկինում (2014թ. և 2018թ.) ՀՀ ՊՆ մատակարարված EMP.3001 մոդելի հաց կտրող մեքենաների վրա տեղադրված դանակների լայնությունը կազմում է 10մմ և ոչ թե 10,5-11,5մմ: Բացի այդ տվյալ դանակների համար էական նշանակություն ունի աշխատանքային (ալիքաձև) հատվածի երկարությունը, որը պետք է կազմի առնվազն 210մմ, ինչի մասին ընդհանրապես հիշատակում չկա գնման առարկայի տեխնիկական բնութագրում, իսկ ընդհանուր երկարությունը կարող է կազմել 275-305մմ:

Խնդրում եմ պարզաբանել.

Ինչով է պայմանավորված, որ հայտարարված մրցույթի հրավերով՝ EMP.3001 մոդելի հաց կտրող մեքենայի դանակի լայնությունը սահմանվել է 10.5-11.5 մմ, մինչդեռ պետք է սահմանվեր 10-11մմ, կամ առնվազն 10մմ, բայց ոչ ավել 12մմ: Բանն այն է, որ թե EMP. 3001 մոդելի հաց կտրող մեքենան և թե դրա դանակները գերճշգրիտ հաստոցներ կամ սարքավորումներ չեն, որոնց համար խիստ կարևոր է հինգ տասներորդական միլիմետրի ճշգրտությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ խնդրում ենք շտկել առկա անհամապատասխանությունները:

Կանխավ շնորհակալություն:



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես որպես ԳՀԱՊՁԲ-7/12 մրցույթի հանձնաժողովի գնահատող անդամ, տալիս եմ մասնագիտական եզրակացություն այն մասին, որ մրցույթին ներկայացված հաց կտրող մեքենայի դանակի տեխնիկական բնութագրում նշված չափերը սահմանված են՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին մատակարարված հաց կտրող մեքենաների վրա առկա գործարանային արտադրությամբ դանակները:

Ինչ վերաբերում է աշխատանքային (ալիքաձև) հատվածի երկարության սահմանմանը, ապա հայտնում եմ, որ տվյալ ցուցանիշը կարող է լինել նաև ամբողջ դանակի երկարության չափով:

ՀՀ ՁՈՒ ԹՎ պարենային ծառայության զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի պարենային ծառայության պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ

փոխգնդապետ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ